ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հուլիսի 2014 թվականի N 97 –Ա

<<ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 90-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Մինաս Ավետիսյանի <<Հայկական հովվերգություն>> որմնանկարի տեղափոխման աշխատանքները ավարտին հասցնելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ե) ենթակետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածությունը հաստատելու մասին>> թիվ 161-Ն որոշմամբ հաստատված 2014 թվականի բյուջեի միջոցներից <<Մինաս Ավետիսյան>>հիմնադրամին հատկացնել 4.500.000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2, ՈՒԺԸ կորցրած ճանաչել Գյումրի համայնքի 2013թվականի սեպտեմբերի 23-ի <<Մինաս Ավետիսյանի <<Հայկական Հովվերգություն>> որմնանկարի վերականգնված հատվածները Գումրու քաղաքապետարանի վարչական շենք տեղափոխման աշխատանքները ավարտին հասցնելու նպատակով դրամական միջոցներ հատկացնելու մասին>> թիվ 90-Ա որոշումը:

3.Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին գումարը հատկացնել 8/4/2 գործառական դասակարգման 4861 (Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (11)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան _____		
Ա. Բաղեյան _____		
Լ.Բարսեղյան _____		
Մ. Գաբոյան _____		
Ա.Գրիգորյան _____		
Վ.Եդիգարյան _____		

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«30» հուլիսի 2014 թ.